

այդ շարժումով նա շարունակ մօտ էր հարուածներ հասցնել ձեր ծնկներին— մտածեցի որ իմ իրաւունքն էր, որ նախապատուութիւնն ինձ տրուէր, և հետևաբար բռնեցի հ արկաւոր դիրքը:

— Բարիքալլահ, ամաց դեսպանը ընդհանուր առմամբ տեսարանը շատ տարօրինակ էր, և փանօք Ալլահին, որ մենք չխայտառակուեցինք:

Միրզա Յիրուզն արձակեց մեզ: Դեռ շատ ժամանակ չէր անցել, երբ լսուեցին աղմկալից ձայներ: Աղմուկը կամաց-կամաց անջքան թանձրացաւ, որ դեսպանը դուրս եկաւ իր սենեակից տեսնելու թէ ինչ է պատահել: Նա տեսաւ որ Իսմայէլ բէգ նազիրը և աղա բէգ միրախորը կատաղած կուռւմ էին: Առաջինը պնդում էր որ իրն էր իրաւունքն թափօրում ամենից առաջ բայել, և վերջինս էլ հակառակն էր պնդում: Այս փոքրիկ խնդիրը այնքան բարդացաւ, որ այդ երկուսն սկսեցին ամենախիստ կերպով ընդհարուել ու մեծ չարիք առաջացնել:

Դեսպանը հրամայեց վերջ տալ նրանց կուռլին, սակայն տեսնելով, որ իր խօսքը չի կատարուում, հրամայեց կօշիկ կրունկով զարկել երկու հակառակորդների բերաններին: Ծառաները պատրաստուում էին այդ հրամանը կատարել միրախորի վրայ, երբ սա մի նոր և յուսահատական ճիգ թափող մարդու վճռականութեամբ վազեց անցաւ մեր մօտից և դէպի տան դուռը խոյս տալով՝ ասաց.

— Ես Գէորգ թագաւորի մարդն եմ. ո՞վ Գէորգ թագաւոր:

Այս խօսքի վրայ դեսպանը նշան տուեց, որ բոլորն հալածեն նրան, և ինքը բոլորի գլուխն անցած կարողացաւ բռնել յանցաւորին ճիշտ այն ժամանակ՝ երբ նա տան դուռն էր հասել:

— Ես քեզ Գէորգ թագաւոր կը շինեմ, ասաց դեսպանը, բռնելով նրա զիւլֆերից: Եթէ ես այդ բանի համար քեզ և հօրդ կրակ չտամ, ուրեմն ես աշխարհում ոչ ոք եմ: Ես քեզ Գէորգ թագաւոր կը շինեմ. Գէորգ թագաւորի մարդն ես, հմտե՛ւ նա մեզանից երկու-երեքիս օգնութեամբ նրան գետին խփեց և պահ մի նրա գլուխը լաւ ծեծելով գետնի հետ, մկրատ ուղեց: Մկրատն իսկոյն տրուեց նրան և նա այդ գործիքով տուեց նրան ամենախայտառակ պատիժը որ կարող է տրուել մի պարսկի: Նա կտրեց նրա մօրուքը, կտրեց նրա զիւլֆերն և յետոյ ազատ թողեց նրան:

Ի հարկէ այս հանգամանքը շատ անախորժելի վերջաւորութիւն եղաւ առաւօտեան բոլոր աջող գործերին, և մենք այդ ամբողջ օրը բացահանչեցինք, «լա Իլլահ իլ Ալլահ»:

Պատահած այս դէպքը կարող է բացատրուել միայն հետեւեալ հանգամանքով:—Մի ֆրանկ՝ որը այդ առաւօտ նշանակուել էր որպէս ծառաների թարգման, խօսել էր նրանց հետ այն ազատութեան մասին, որ Անգլիայում վայելում են բոլոր դատակարգի մարդիկ: Նա նրանց յայտնել էր, որ Անգլիայում ամեն մարդ գտնուում է օրէնքի պաշտպանութեան տակ, որ Անգլիայում ոչ ոք իրաւունք չունի ուրիշին ծեծել, ֆալսել կային կապել, որ այդ իրաւունքը վերապահուած է միմիայն դատաւորներին, որոնք ընտրուել և նշանակուել են թագաւորի կողմից: Այսպիսի վարդապետութիւններով այդ ֆրանկը նրանց մտքից հանել էր հպատակութեան ու խոնարհութեան գաղափարը:

Ադա բէզն էլ վստահանալով անհաւատի խօսքերի վրայ, դժբաղդաբար առաջին քայլափոխում կորցրեց իր մօրուքը: Նրա տրտմութիւնն իր զիւլֆերի կորստեան համար՝ չափ ու սահմանից անցաւ: Ախր նրա մեծ պարծանքն էին այդ զիւլֆերը. նա շատ սէր ունէր իր անձը գեղեցիկ դարձնելու, և անհ, որչափ մեծ էր նրա վիշտը երբ անսնում էր իրան անարգաբար զրկուած այն բանից՝ որը նրան որոշում էր որպէս մի դաշանգ¹⁾: Նրա ցաւը աւելի մեծ էր քան կարող էր տանել իր փիլիսոփայութիւնը...

Նա անիծեց ֆրանկ թարգմանին, ֆրանկ թագաւորին և այն երկիրը որտեղ ինքը բերուել էր: Նա երդուեց, որ եթէ հնարաւորութիւն ունենար ճանապարհ գտնելու դէպի Պարսկաստան՝ իսկոյն ձի կը հեծներ և առանց կանգ առնելու կը քշէր մինչև Դէմավանը և թէ՛հրանի աշտարակները երևային:

Գլ. իգ.

Անդլիական այցելութեան կարգ ու սովորութիւնների զանգահարների և Արեւելեան Հնդկաց ընկերութեան մասին:

Դեսպանի՝ անգլիացւոց թագաւորին այցելելու օրը, ինչպէս և մի քանի՝ օրեր էլ դրանից յետոյ, մեր տունն են խուժում զանազան նկարագրի տէր մարդիկ, որոնց վիսաւոր նպատակն էր մեր տանը թողնել զանազան կտոր թղթեր, որոնց վրայ գրուած էին իրանց անուններն ու ընակարանների տեղերը: Անշուշտ նրանց նպատակն էր դեսպանին յարգել սակայն

1) Գեղեցիկ, վայելչակազմ երիտասարդ:

մեզ հաւատացրին որ նրանց այդ արարքը շատ ուրիշ նշանակութիւններ էլ ունէր—նշանակութիւններ՝ որ մեզ համար դեռ անհասկանալի էին, բայց ժամանակի ընթացքում հասկանալի դարձան:

Մենք զարմանում էինք թէ այդ մարդկանց մեր տան դռան անձանօթ անուններ թողնելը ինչ բարի հետեանք կարող էր ունենալ, և սկսեցինք մտածել որ, գուցէ նրանք մի տեսակ շէյթանութիւն¹⁾ էին անում սակայն մէհմանդարը հաւատացրեց մեզ, որ այդ իրանց երկրի սովորութիւնն էր և ոչ մի սատանայութիւն չկար նրանց մէջ:

Բանից դուրս եկաւ որ, ամեն մի տոմս նշանակում էր մի այցելութիւն և մէհմանդարը մեզ համար պարզ հասկանալի դարձրեց որ, եթէ Անդլիայում այցելութեան գործը կատարուէր այնպէս ինչպէս կատարուում է Պարսկաստանում, ուր այցելուն նախ մի պատգամաւորի միջոցով յայտնում է իր գալը և յետոյ այցելելիս էլ այնքան երկար է նստում մինչև որ ծխում է երկու-երեք դայլան և նոյնքան էլ սուրճ է խմում՝ ոչ ոքի կեանք այնքան երկար չէր լինի որ կարողանար կատարել այդ ծիսական կարգը:

Մէհմանդարի այս բացատրութիւնը լսելուց յետոյ, Միրզա Ֆիրուզի համար իւրաքանչիւր բոլէն սկսեց չափից աւելի երկար թուալ, մինչև նա էլ իրան համար այցետոմսեր պատրաստել տուեց, և երբ այդ այցետոմսերի կապոցը բերուեց, ցոյց տրուեց իրան, և նա տեսաւ իր անունը նրանց վրայ տպուած՝ ուրախ որտով բացազանչեց՝ «Շուքր օլլահ¹⁾» և իսկոյն հրամայեց ամենայն եռանդով ցրուել նրանց:

Մեզ այցելեցին իրանց ձեռքում փոքրիկ գրքեր ունեցող մի քանի մարդիկ, որոնց դիտաւորութիւնը մեզ համար անհասկանալի էր: Նրանցից մէկը, տաճկական սովորութեան համեմատ, մեզանից ըախշիշ²⁾ խնդրեց, որովհետև նա հաւատացրեց մեզ, որ մեր ժամանման ժամանակ ուրախութեան զանգեր էին հնչեցրուել և որ ինքն օգնել էր այդ գործին, այսինքն օգնել էր որ զանգերը հնչեցնէին:

Մենք դեռ զանգերի մասին չէինք լսել որ հնչեցնում են որպէս ցնծութեան նշան: Մեր երկրում զանգերը յայտարարում են մի կարաւանի հասնելը, և երբեմն էլ անհաւատների եկեղեցիներէի գոյութիւնը. սակայն տեսնելով որ այստեղ զանգեր հնչեցնելը հասարակութեան ցնծութեան միակ նշանն կամ

1) Սատանայութիւն. 1) Գոհութիւն Տեառն. 2) Նուէր, պարգև. ծ. Բ.

ցոյցն է, դեսպանը առանց տատանուելու շնորհեց խնդրուած բախշիշը:

Մէկ մարդ էլ այցելեց մեզ: Այդ մարդը արձանագրուած էր ամեն մի անձնաւորութեան անուն, որը գալիս էր իր խոնարհ յարգանքը մատուցանելու անգլիացւոց թագաւորին: Սա էլ մի վճար պահանջեց:

—Օ՛, սա շատ զարմանալի է, բացականչեց դեսպանը. եկէք մի քանի բաներ հարցնենք սրանից. մենք անկասկած շատ բաներ կը լսենք այս մարդից անհաւատների սովորութիւնների մասին:

Բանից դուրս եկաւ, որ պաշտօնական պարտականութիւնն չէր, որ այս մարդը կատարուած էր, այլ նա այդ բանն անում էր իր ազատ կամքով: Նա բաւական եկամուտ ունէր, որովհետեւ, ինչպէս ինքը մեզ հաւատացրեց, շատ մարդիկ մեծ անձկութիւն ունէին որ իրանց անունը արձանագրուէր իր մատենում: Եւ եթէ որեւէ մէկը մերժում էր նրան, նա այդպիսի մարդին խիստ պատժում էր՝ նրա անունը չարձանագրելով իր մատենում:

Սակայն նրանք՝ որոնց գործն ու պարապմունքը մեզ համար երբէք հասկանալի չէր՝ մի խումբ մարդիկ էին, որոնք, որպէս շնորհաւորական երաժշտութիւն վարժուել էին եզան ոսկրները զարկելով երկաթեայ մեծ տապարներին: Սրանք էլ եկան ու բախշի խնդրեցին: Մենք աշխատեցինք քննել այս տարօրինակ սովորութիւնը, սակայն չկարողացանք, և վերջն այն եզրակացութեան եկանք, թէ նրանք էլ մեր լութիւնների պէս մարդիկ են, որոնք իրանց թմբուկների անընդհատ դրժբոցներով կարող են լաւ ներդաշնակութիւն պահել եզան ոսկրներով ու տապարներով երաժշտութիւն հանող անգլիացի այս մարդկանց հետ:

Յիրաւի, իւրաքանչիւր բոպէն, որ անցնում էր, մենք աւելի և աւելի տեղեկութիւններ էինք ստանում ֆրանկների ձևերի, վարք ու բարքի մասին: Դեսպանի ներկայութեամբ մենք վիճաբանում էինք այն բոլոր բաների վրայ, որ ամեն օր տեսնում էինք, երբ, մէհամադարը մեծ շտապով ներս եկաւ և յայտնեց որ Հինդի թագաւորներն գալիս են մեզ այցելելու:

—Ո՛վ Ա՛լի, բացականչեց դեսպանը, այս ինչպէս է. թագաւորներ են գալիս մեզ այցելելու. և ո՞չք մեզ նախապէս իմաց չ'է տուել:

Մենք վաղեցիք պատուհանների ձօտ տեսնելու թէ այդ մեծ անձնաւորութիւնները ի՞նչ հանդէսով էին գալիս: Մենք

կարծում էինք, որ նրանք գոնէ նստած կը լինէին փղերի վրայ, բայց կը զարմանաք որ մենք տեսանք միայն երկու հասարակ անհաւասանք, որոնք կանգնած էին մի հնացած, խախուտ, մէջը յարդ թափթափուած կառքի կողքին և սակարկում էին շորերը պատառոտուած կառապանի հետ իրանց վճարելիք վարձի վրայ: Եւ այդ երկու մարդիկը, ինչպէս մէհմանդարն ասաց, թագաւոր կոչուած անձնաւորութիւններն էին:

— Ինչպէս, զարմացաւ ղեսպանը, սրմնք են Արընդգիրի, Ջէհանգիրի և Շահ Ալէմի յաջորդները: Երևի դուք ծաղրում էք մեզ:

— Կարճ ժամանակում դժուար կը լինի խնդիրները բացատրել, ասաց մէհմանդարը. նրանք կանոնաւոր թագաւորներ չեն. նրանցից մէկը կոչուած է «աթոռ» իսկ միւրը՝ «փոխ-աթոռ»:

Մէհմանդարը դեռ իր խօսքը չէր վերջացրել՝ երբ երկու թագաւորները ներս մտան: Դժուար էր իմանալ թէ քաղաքավարական ինչ ձևերով պէտք էր պատուասիրել այդ անձնաւորութիւններին. բայց բանից դուրս եկաւ որ նրանք ամենեւին չէին սպասում որեւէ քաղավարական ձևով ընդունուել: Նրանք պարզ մարդիկ լինելով ոչ մի մեծութեան ցոյց չէին անում. նրանք աւելի վաճառականների էին նմաւում քան թագաւորների:

Առաջին մեծարանքները վերջացնելուց յետոյ, ղեսպանը աշխատեց տեղեկանալ թէ նրանք ինչպիսի կառավարութիւն ունէին: Յայտնուեց որ նրանք գլխաւորները կամ առաջնորդներն էին քսան և չորս հոգու, որոնք նստում են աթոռների վրայ և որոնք իրաւունք ունին մտածելու և խօսելու ամեն մի խնդրի վերաբերմամբ, որ կապ ունի Հնդկաստանի հետ:

Նրանք մի քիչ աշխատեցին մեզ մի բան հասկացնել իրանց և իրանց կառավարութեան մասին, և ապա ղեսպանին հրաւիրեցին իրանց պալատը, ասելով նրան որ նա այնտեղ աւելի շատ բան գործնականապէս կ'իմանար իրանց կառավարութեան տեսակի մասին, քան մի քանի ժամ բացատրութիւններ լսելով:

Որչափ որ մենք կարողացանք ըմբռնել՝ նրանք թէև երկրների տէր էին, բայց իսկապէս թագաւորներ չէին, որ այդ երկրներից հանած եկամուտները իրանց չէր պատկանում այլ ուրիշների, որ նրանք գործակից էին մի թագաւոր կամ Ֆարման Ֆարմա ուղարկել Կալկաթա, բայց որ, իրանք, իրանց հնդիկ թագաւորը, իրանց նաւատորմիղը, իրանց զօրքերը բոլորն էլ հպատակ էին մի ուրիշ աւելի մեծ մարդու, որն ապ-

րում է երկրի մի հեռաւոր անկիւնում, և որ այդ մարդն էլ կրկին անմիջական ծառան է Անգլիայի և Հնդկաստանի շահի:

Մեզ համար իսկապէս բոլորովին անհասկանալի էին մեր լուծ ընդ ընկած բացատրութիւնները: Մենք շփոթուեալ էինք, չէինք կարողանում հասկանալ թէ ի՞նչ է նշանակում մեծ թագաւորներ, փոքրիկ թագաւորներ, վեզիրներ, մեծ աթոռների վրայ նստողներ, եռոտանու վրայ նստողներ: Մեզ համար հանելուկներ էին դրանք:

Վերջապէս մեր այցելուները գնացին և դեսպանը խոստացաւ շուտով նշանակել մի օր՝ աւելի լաւ ծանօթանալու կումկանու հետ, որի մասին ինքն էլ, իր հայրենակիցներն էլ այնքան բաներ էին լսել, և որի գոյութեան մասին, հարկաւոր էր որ Պարսկաստանը լիովին տեղեկութիւններ ունենար:

Երկու թագաւորները փոխանակ կրկին իրենց քայքայուած կառքը մտնելու, խառնուեցին փողոցում անցուդարձ անող բացմութեան հետ, և ո՛չ ոք ուշադրութիւն չդարձրեց նրանց վրայ:

Երբ նրանք լաւ հեռացան, մենք զարմացած լուռ նստեցինք և յետոյ բացականչեցինք:

«Ալլահ, Ալլահ: Ի՞նչ, Հնդկաստանը, այդ փառաւոր կայսրութիւնը, պարսկական յաղթութիւնների ու փառքի այդ վնայրը, փողերի ու թանկագին քարերի այդ երկիրը, շաւրի և քինթօրների բուն տեղը, այն դրամխտը որի մասին երգել են բանաստեղծները, այն դրամխտը որի մասին գրել են պատմաբանները, այն դրամխտը որ աւելի հին է քան Իրանը—այն Հնդկաստանը, որի սահմաններում արեւին թոյլ է տրուած բարձրանալ, որի փառաւոր լեռների շուրջը (որոնց մի քանիսը ծածկուած են յաւիտենական ձիւնով և մի քանիսն էլ յաւիտենական կանաչով) թոյլ է տրուած աստղերին ու լուսնին խայտալ և խրախճանալ: Օ՛, ի՞նչ Հնդկաստան, դա այնքան ընկել է, այնքան ստորացել է՝ որ այժմ դրա վրայ իշխում են երկու աննշան մահկանացուներ, որոնք ապրում են արեւի ճառագայթներէից զուրկ վայրում—երկու խողակեր անհաւատներ, որոնք գերծում են իրանց երեսները, որոնք անմաքուր են, ոտքով են շրջում, և, որպէս պետական մարդիկ՝ ճանապարհորդում են կեղտոտ, յարդով լցուած կառքերով:

Այս բանը մեզ շատ աւելի դարմանալի երևաց քան նոյն իսկ բէգ ջանի կառավարութիւնը—բէգ ջանը որ կառավարում էր թիւրքմէններին, իշխելով Սամարղանդի և Բոխարայի վրայ, և որը վարում էր մի կեանք աւելի որպէս մուրացկան քան որպէս իշխան:

Բայց մենք հրաշքներէ երկրում էինք: Ո՛չ մի օր, ո՛չ մի ժամ չէինք անցկացնում առանց լսելու կամ տեսնելու մի բան՝ որի նմանը Պարսկաստանում մեր պապերն երազում անգամ չէին տեսել:

Գլ. Խդ

Դէլֆարիբի՝ այսինքն չերքեղուհու մասին: Նա եւրոպական զգեստ է հագնում, բայց չի համաձայնում իր երեսը չժամկել:

Այս ամբողջ ժամանակի ընթացքում չէրքեղուհին ապրել էր ապահով փակուած իր սենեակում, և հաւանականաբար կը շարունակէր այդպէս ապրել, եթէ անհաւատների մէջ գոյութիւն չունենար մի բաւական անիրաւ օրէնք՝ որ թոյլ չէ տալիս որ որեւէ մէկը վայելի էր ստրուկի սեփականութիւնը: Այդ օրէնքը շատ խստիւ պահանջում է որ ամեն անձն ազատ լինի, և եթէ դա կարողանար ազատել չերքեղուհուն, թերևս նա կը հարկադրուէր իր երեսը բաց անել մարդկանց մօտ և ապրել՝ ազատօրէն խօսակցելով մեր մարգարէին և մեր իմամներին արհամարող անհաւատների հետ: Հէնց որ այս օրէնքը յայտնուեց դեսպանին, նա առանց վարանուելու իսկոյն ազատութիւն շնորհեց իր ստրկուհուն և ասաց նրան:

— Դու այժմ ազատ ես. դու այժմ կարող ես անել ի՞նչ որ կամենաս:

— Ո՛վ Մարգարէ, ո՛վ Մոհամէդ, բացականչեց Դէլֆարիբը. դու չես կամենալ որ ես ստորանամ ու փողոցներն ընկնում անպարկեշտ կանանց նման: Ո՛չ, ո՛չ, ես ուզում եմ մնալ հէնց այստեղ, ուզում եմ իմ տեղում մնալ:

— Բայց դու ազատ ես՝ ասաց դեսպանը. այս երկիրը ազատ երկիր է. այստեղ ստրուկներ չկան: Գնա՛, այստեղ պարտեզներ կան, այստեղ կանաչ դաշտեր կան. գնա՛, թող հողիդ երջանիկ լինի:

— Հողիս ո՛չինչ բան կարիք չունի, ասաց չէրքեղուհին. հողիս կարօտ է միմիայն իմ տիրոջ պաշտպանութեան: Թոյլ տուէք որ գործեմ իմ տիրոջ համար, կարեմ նրա շորերը, ասեղնազործեմ նրա արաղչիները, պահեմ ու խնամեմ նրա փողերն ու գոհառները. ես ուրիշ ոչինչ չեմ ուզում: Ես կը մտածեմ վարդի և սոխակի մասին միայն այն ժամանակ՝ երբ կը վերադառնանք Իրան—մեր երկիրը. բայց մինչև այդ ժամանակ՝

մենք պիտի յիշենք որ անհաւատների ձեռքում ենք և հետևաբար մեր յոյսը պիտի դնենք Ալլահի վրայ...

Դեսպանին այնքան հաճոյացրեց իր ստրկուհու այս անձնուրուրութիւնը, որ պատուիրեց նրան հագնել ինչ տեսակ զգեստ որ կամենար: Նա ցանկութիւն յայտնեց որ չերթեզուհին դէն դէն իր շերքեզական զգեստը որ այժմ քրքրուած էր և հագնէր այնպիսի շրջազգեստ որպիսին հագնում են ֆրանկ կանայքը:

Նա աւելացրեց որ Շահն իրան պատուիրել էր որ իր վերադարձին արքայական հարեմի համար ֆրանկ կանանց զգեստներից նմոշներ տանէր. ուստի պատուիրեց Դէլֆարիբի որ նրանց շորերից իր անձի վրայ փորձէր:

Դեսպանի ցանկութեան համաձայն՝ մի մոյգ-կանաչ թաւշեայ զգեստ որոշուեց նրա համար և կանչուեց մի անգլիացի դերձակ այդ զգեստը կարելու համար: Այդ զգեստը պատրաստելու համար՝ դերձակն այնքան բազմատեսակ նիւթեր առաջարկեց որ չէ կարելի նկարագրել. բայց դեսպանը ներհակեց նրան ասելով.

—Ո՛չ ո՛չ, մենք պիտի բաւականանանք միայն արտաքինով. հոգ չէ թէ ներքինն ինչ կլինի. ինչ ուզում է թող լինի:

Վերջապէս շրջազգեստը պատրաստուեց և մեզ ուրախութիւն պատճառեց: դերձակը Դէլֆարիբի ականջազինտները հանեց նրա ականջներից, մազերը հիւսեց եւրոպական ձևով և գլխին կապեց ու զգեստը հագցրեց: Չէրքէզուհին իր եւրոպական տարազով կանգնեց իր տիրոջ առջև, բայց նա ամբողջ մարմնով դողում էր. կարծես նա ծածկուել էր Դեսպանի ձեռներով:

—Տօ ինչ է պատահել քեզ , ինչո՞ւ ես այդպէս դողում, հարցրեց Միրզա Ֆիրուզը:

—Աղան, աղան, թոյլ տուէք ինձ աղաչել, ասաց խեղճ կիւնը, որ եթէ անհաւատների շորերն այսպէս են, ուրեմն նրանց կանանց մարմինները զազանների մտից արիւնից են կազմուած: Ես դողում եմ, աղա, մարմինս սառոյց է կտրել:

Քննելով մենք տեսանք որ, երեսի թաւշեայ շրջազգեստից զատ՝ նա տակից ուրիշ ո՛չինչ չուէր հագին. բոլորովին մերկ էր նա. ուրեմն զարմանալի չէր որ նա դողում էր: Դեսպանը պատուիրեց նրան խորհրդակցել անգլիացի կանանց հետ և իմանալ թէ ուրիշ ի՞նչ բան պիտի հագնէր շրջազգեստի տակից: Միւնտոյն ժամանակ Դէլֆարիբը կրկին հագաւ իր չէրքէզական շորերը, ապա նրանց վրայ՝ եւրոպականը, և մի քիչ տաքացաւ:

Նոյն միջոցին մենք տեսանք որ ամբողջ քաղաքը սկսել էր հետաքրքրուել: Լոնդոնի կանայքն սկսեցին խուժել մեր տունը և իրանց լեզուներով (լեզուներ որ՝ ինչպէս Սաադին ասում է «խօսեցնում են սրտին, և ոտներին մանգալ են տալիս առանց գլխի մէհմանդարութեանը») մի տեսակ ուխտատեղի դարձրին տարարադէ չէրքէզուհու ընկալանը: Բայց, Ալլահ, Ալլահ, ինչ զարմանալի տեսարաններ ներկայացրին նրանք մեզ խեղճ հաւատացեալներս համար: Օ՛, ինչ հրաշմալի աչքեր ունէին նրանք—աչքեր՝ անողորմ, աչքեր՝ անզուլթ: Նրանց թուում ես իսկապէս մի քանի գեղեցկուէիներ տեսայ—ա՛յնպիսի գեղեցկուէիներ՝ որոնց առջև մեր օրհնեալ արքայից արքան (ողորմութիւն և խաղաղութիւն նրան) իրան երջանիկ կը համարէր սողալ իր ձեռների և ծնկների վրայ: Նրանք ամենևին փոյթ չունէին որ մարդիկ տեսնում էին իրանց, որովհետև նչ մի անգամ չպատահեց որ նրանք իրանց երեսներն ծածկելու փորձն անէին:

«Սեղճ Ֆրանկներ, մտածեցինք մենք,» խեղճ Ֆրանկներ, որ միմիայն մէկ կին է սահմանուած իրանց համար: Եթէ մեր սուրբ Մարգարէն այստեղ, այս երկրում հաստատած լինէր իր կրօնը փոխանակ սուրբ Մէքքայում՝ նա իր հետևողներին չորսի տեղ վեց կին առնելու իրաւունքը կը շնորհէր:»

Ես իմ կողմից պիտի խոստովանուեմ որ, ամեն անգամ նրանց տեսնելիս ուղղակի մեռնում էի. իսկ գալով մեր դեսպանին՝ մենք բոլորս տեսնում էինք թէ նա ինչ վիճակում էր, ինչ էր քաշում նա: Մենք տեսնում էինք, որ նախքան միւս լուսնի լրումն՝ նրա սիրտը կայրուէր, կը խորովուէր և շուտով նա կը դառնար այն իսկական Մաջնունը¹⁾—այն Մաջնունը՝ որ թշբրից ու աչքերից էր ստանում իր սնունդը:

Ամեն օր այդ կանայքը գալիս էին այցելելու չէրքէզուհուն: Նրանք իրանց հետ բերում էին ամեն տեսակ խաղալիքներ ու ընծաներ, և նուիրում էին նրան գլթալով՝ ինչպէս իրանք էինք ասում, նրա ստրկական ողբալի դրութեան վրայ: Նրանցից մի քանիսը պատկերներ էին տալիս, ոմանք տիկիներ և ոմանք էլ գրքեր: Դէլֆարիբը շնորհակալ էր նրանց բարի ուշադրութեան համար, միայն թէ ցաւում էր նրանց ընկած, ստորացած վիճակի վրայ: Բայց նա զայրանում էր երբ նրանք աշխատում էին համոզել կամ երբեմն էր փորձում էին ստիպել նրան որ իրանց նման նա էլ գուլպայ հագնէր:

1) Պարսկական Աբելարդը. Լէյլայի սիրահարը:

Նա շատ զարմանում էր երբ նրանք ասում էին որ մերկ ոտներով երևալուց աւելի անպարկեշտ բան չկայ:

—Ինչպէս, հարցնում էր Դէլֆարիբը. դուք այդքան բծախնդիր էք ձեր ոտները ծածկելու, բայց հակառակ բոլոր պարկեշտութեան՝ ձեր երեսը չէք ծածկում: Իսկապէս դուք պարկեշտութեան վրայ շատ տարօրինակ գաղափար ունիք. բոլոր կանանց ոտները միանման են, և եթէ նրանց չծածկեն՝ անպարկեշտութիւն չկայ դրա մէջ, որովհետև ոչ ոք չէ կարող նրանց ոտներից ճանաչել նրանց. բայց երեւը—այդ տեղը որ սուրբ է, որ միմիայն ամուսինը կարող է տեսնել, որ պէտք է ամենայն զգուշութեամբ ծածկած պահել, այն դուք ձեր մարմնի այդ մասը—ձեր երեսը չէք ծածկում, բաց էք թողնում որ ամեն մի սրիկա տեսնի, քննադատի, ծիծաղի վրան:

—Ալլահ ի Ալլահ, ասաց նա մի օր մի երիտասարդուհու, որը ստիպում էր իրան մի զոյգ գուլպայ նուէր ընդունել. —Ալլահ, Ալլահ, ասթաֆօրէլլահ, խնձիկ ես, ուղեղդ հիւանդ է: Դու ինձ տուր միայն ազատ սրունքներ, ծածկուած երես, սուրբ Մարգարէի շնորհը, և ուրիշ ոչինչ մի խօսիր: Զարմանալի վատ բաղդ ենք ունեցել մենք որ եկել, ընկել ենք այն երկիրը, ուր կանայք ծածկում են իրանց ոտները, բայց չեն ծածկում իրանց երեսը:

Թէև անգլիացի այդ կանայքն այդքան բարեսրտութիւն էին ցոյց տալիս դէպի Դէլֆարիբը, այնուամենայնիւ նրանց վարմունքի մէջ կար մի բան՝ որ մենք ոչ մի կերպ չէինք կարողանում հասկանալ: Չիշտ է, նրանք բոլորն էլ գալիս էին տեսնելու նրան, բայց նրանցից ոչ մէկը չէր աշխատում նրա միայնութեան մէջ նրան ուրախացնել, մի ընկեր ձարելով նրա համար...:

—Ո՞վ ընկեր կը դառնայ, ասում էին նրանք: Ո՞վ կը ընկերանայ մի կնոջ հետ՝ որ ամուսնացած չէ ան մարդու հետ՝ որի հետ նա ապրում է:

Մէկ կիւն կար, որին դեսպանը զանազան օգուտներ էր առաջարկում, եթէ նա յանձն առնէր ապրել Դէլֆարիբի հետ և դաստիարակէր նրան. բայց այդ կիւնը սաստիկ զայրանում էր այդպիսի առաջարկութեան վրայ: Նա մի կիւն էր որ փողոցներում արձակ համարձակ շրջում, խօսում ու շփում էր տղամարդկանց հետ. թև թև տուած մաս էր գալիս երիտասարդների հետ, միշտ տղամարդիկ այցելում էին նրան, և այնուամենայնիւ նա իր այդ անպարկեշտ վարքի համար չէր դատապարտւում, ոչ ոք չէր մեղադրում նրան: Նա այդպիսի կիւն լինելով հանդերձ՝ դարձեալ զայրանում, մոլեգնում էր եթէ

մէկը նրան առաջարկում էր ընկեր դառնալ, կամ նոյն կերպով վարուել իր սեռի հետ ինչպէս անմեղ Դէլֆարիբի:

Արդ, մեր երկրում ի՞նչ կասէին այդպիսի մի կնոջ, ի՞նչ կանէին նրան—հչինչ, նրա մազերը կը կտրէին և իրան մի էշի վրայ կը դնէին՝ երեսը դէպի պոչը դարձրած, պոչը ձեռը դրած ման կածէին հրապանակում և յետոյ կարտաքսէին անապատը որպէս մի պիղծ, անառակ կին:

Այսպէս է բարքերի տարբերութիւնը տարբեր երկրներում և ի՞նչ է կարող կասկածել թէ Ռոն է լաւ, երբ օրհնեալ գործնում մենք կարողւմ ենք այս խօսքերը—«Ասացէք հաւատացեալ կանանց որ զսպեն իրանց աչքերը, պահպանեն իրանց պարկեշտութիւնը, ծածկած պահեն իրանց զարդերը, քօղով ծածկեն իրանց կուրծքը, թոյլ չտան որ իրանց ամուսիններից կամ հայրերից և եղբայրներից գտա՝ ուրիշ մէկը տեսնի իրանց զարդերը»:

Արդ, Անգլիայի կինը իր ունեցած բոլոր զարդերը ցոյց է տալիս ում որ կամենում է: Ամեն մի հայր, որդի, եղբայր կարող է տեսնել նրա երեսը. նա ոչինչ բանով չէ ծածկում կամ զսպում իր աչքերը: Իսկ գալով պարկեշտութեան կամ կուրծքները քօղով ծածկելու խնդրին՝ Ալլան Ալլան, մեր օրհնեալ Մարգարէն եթէ այստեղ լինէր՝ սաստիկ նեղութիւն պիտի կրէր այդ մասին...

Ի՞նչ վիճակում էինք որբեմն մենք—մենք՝ որ խեղճ օտարականներ էինք, մենք՝ որ մեր աչքում կանայքն այստեղ նոր բաներ էին երևում, մենք՝ որ միայն մեր մայրերի, քոյրերի երեսներն էինք տեսել, մենք՝ որ երբ Շահի կանայքը դուրս էին գալիս, պարտաւորում էինք մեր կեանքը փրկելու համար թագնուել. կարծես թէ մահը հալածում էր մեզ կլանելու: Եւ ահա մենք այստեղ՝ հուրիների աշխարհում էինք— հուրիներ՝ որոնք գրաւում, յափշտակում էին մեզ և մենք կարողանում էինք ազատ, անվախ կերպով նայել նրանց, տեսնել նրանց երեսները, առանց սարսափելու նրանց ամուսինների նախանձից կաա դողալու կախուելու զարհուրանքից:

Այս փոփոխութիւնը չափից աւելի մեծ էր մեզ համար, այնպէս որ ո՛չ մի ուրիշ բանի վրայ չէինք խօսում կամ երազում: Ես իմ կողմից պիտի ասեմ որ տարաբախտ Զինարի և չարամիտ Շաքարլարի դէպքերից յետոյ, կարծում էի որ այլևս փափուկ զգացում չէր մնացել ինձնում. այնուամենայնիւ ամեն քայլափոխում սէրը թռչում էր հոգուս մէջ և սիրտս թրթռում էր յափշտակութիւնից՝ երբ մտածում էի Ֆրանկների անհաւատ աղջիկների անդիմադրելի հրապուրանքների վրայ:

Գլ. Իե

Ղեկավարը ներկայանում է անզլիացւոց թագուհուն եւ մտտուցանում է ընծաները:

Ընծաները որ Միրզա Ֆիրուզը բերել էր Անգլիայի Շահի համար, ամբողջ քաղաքում զրոյցի առարկայ դարձան: Ամեն մարդ վազում էր ձիերին տեսնելու: Շալերը նախանձ գրգռեցին կանանց մէջ և բանաստեղծական հայելին ընդհանուրի հիացմունքը շարժեց:

Ղեկավարի մտեկաւ մի խան՝ որին մէհմանդարը ներկայացրեց որպէս Անգլիայի թագուհու արարողապետը: Մենք կարծեցինք թէ նա թագաւորի կանանոցի աւագ վերակացուն է, սակայն մեզ հաւատացրին որ Ֆրանկները այդպիսի պաշտօնեաներ չունին, և որ թագաւորի կանանց պատիւը պաշտպանելու համար՝ ամենևին հսկողների կարիք չկայ:

Այս խանի պաշտօնը, ինչպէս մէհմանդարը բացատրեց, այն էր որ նա արժանաւոր անձնաւորութեանց ներկայացնէր թագաւորի բանուին (աւագ կնոջ) և նա, հէնց այդ պարտականութիւնը կատարելու համար էր, որ եկաւ Ղեկավարի մօտ և նրան իր բոլոր հետևորդներով հրաւիրեց ներկայանալու նրան—թագուհուն:

Թէև խանը Ղեկավարին հրաւիրեց իր թագուհուն այցելելու, բայց նա (Ղեկավարը) երկիւզ կրելով որ մի գուցէ իր այցելութիւնը վիրաւորանք պատճառի՝ անձկութեամբ հետաքրքրուեց իմանալու թէ արդեօք անգլիացւոց Շահը գիտակ էր այդ հրաւերի մասին թէ՞ չէ. սակայն ինչպէս երևաց, սչինչ կարիք չկար որ նա իմանար կամ նրանից արտօնութիւն լսորուէր, որովհետև թագուհին իրաւունք ունէր տեսնելու և խօսելու ում հետ որ ինքը կամենար:

Տեսնելով որ երկրի սովորութիւնն իսկապէս այդպէս է, Ղեկավարը, առանց որեէ վախ դալու ուրախութեամբ ընդունեց խանի հրաւերը և որոշեց հետևեալ օրը ներկայանալ թագուհուն: Միևնոյն ժամանակ նա խանին յանձնեց թագուհուն տրուելիք ընծաները, որ յանձնուած էր իրան, բայց իրան վերապահեց նրան ուղղուած նամակը յանձնելու պարտականութիւնը, որովհետև ցանկանում էր որ ինքն իր ձեռքով յանձնէր այն:

Շուտով մենք շատ բաներ պիտի տեսնէինք, և այդ բաները տեսնելու ակնկալութիւնը մի տեսակ տարօրինակ զգա-

ցում և յոյզ բերեց մեր վրայ: Մի պարսիկ չէ համարձակում մինչև անգամ երևակայել մեր շահի հարեմի բնակիչները աչքեր շլացնող շքեղութիւնը և անդուգական գեղեցկութիւնը. բայց այստեղ մենք ահա կանգնած էինք իսկ այն զուարճութիւնների սեամի վրայ որ մեր երկրում անգամ բոլոր խօսակցութեան նիւթն էր:

Մենք շուտով տեսնելու էինք Փրանկների թագաւորի կանանց, դուցէ և նրանց աղջիկներին. և շատ քչերը կարող էին այդպիսի բազաւորութեան հանդիպել:

«Փառք Ալլահին, ասացինք մենք. եթէ փողոցներում և փողոցի անկիւններում մեր տեսած գեղեցկուհիները այնպէս են՝ որ գրաւում են մեր սրտերը, ուրեմն ինչքան հրապուրիչ և յափշտակիչ պիտի լինին նրանք, որոնք գերել են մի թագաւորի սիրտ. որքան գեղեցիկ պիտի լինին նրանք, որոնց թոյլ չէ տրուում ուրիշ կանանց պէս երևալ մարդկանց առաջ և որոնց դիւթանքները պիտի նման լինին այն գոհարներին, որ պահուում են ապահով արքայական գանձարանում:

Դեսպանը հագնուեց սովորականից շատ աւելի փառաւոր կերպով: Նա զարդարեց իր անձը մի շապկով, որը պատրաստել էր մի անհաւատ դերձակուհի և որի ամբողջ շուրջն ու ծայրերը ասեղնագործուած էր և աւելի սպիտակ էր քան Աղբիղաղի¹⁾ ձիւնը:

Ես, յիշելով իմ երեսի այն մասերը, որ գրաւել էին քմահաճ Շաքարլարին՝ մեծ ջանք արի վերանորոգելու այդ մասերի գեղեցկութիւնները: Ես թարմացրի մօրուքիս գոյնը և անուշահոտութիւն տուի. բեխերիս ծայրերը սրեցի, ոլորեցի վեր դէպի աչքերիս անկիւնները և թարմ փայլունութիւն տուի դիւֆերիս:

Առաւօտն եկաւ. մենք բոլորս հագնուեցինք, դեսպանը վարդաշուր սրսկեց թագուհուն յանձնելիք երջանկաբեր նամակի մարմաշեալ և մետաքսիայ ծածկիչի վրայ և յետոյ մտնելով մեզ համար ուղարկուած արքայական կառքը՝ ճանապարհուեցինք դէպի պալատը:

Պալատում մեզ ընդունեցին միայն տղամարդիկ: Այնտեղ ոչ մի բան չկար, որ ցոյց տար թէ կանայք էլ են բնակուած: Բոլոր բնակիչները տղամարդ էին: Ինչքան տարբեր մեր երկրում, ուր հարեմներում գեղանի բանտարկեալները իրանց ամուսիններից և երբեմն էլ իրանց եղբայրներից զատ՝ ուրիշ ոչ ոքի երես չեն կարող տեսնել:

¹⁾ Արարատ լեռը.

Անցնելով մի քանի շքեղազարդ սենեակները միջով, որտեղ կինարմատի ոչ մի նշոյլ չկար, մենք վերջապէս հեռուից տեսանք մի քանի շրջազգեստներ: Եւ մի քանի քայլ էլ առաջ դնալով, կամաց-կամաց մեր առաջ յայտնուեցին մի քանի տարօրինակ դէմքով կանայք: Որքան մենք կարողացանք հասկանալ, նրանք թագաւորի կանայք էին, որովհետեւ նրանց ձևերից պարզ յայտնի էր, որ իւրաքանչիւրը պիտի մի շահագրա՞) աւելացնի արքայական գերդաստանի վրայ, որը, անկասկած արդէն բաւական բազմանդամ է:

Աւելի մօտենալով մենք տեսանք որ մեր ենթադրութիւնը սխալ էր. որովհետեւ այդ կանանցից մի քանիսն այնքան պառաւ էին որ անկարելի էր որ կարողանային այդպիսի բաղդաւորութեան արժանանալ: Մենք այն եզրակացութեան եկանք, որ այն՝ ինչ մեզ գրաւել էր ոչ այլ ինչ էր եթէ ոչ նրանց շատ արտաքոյ կարգի ձևով զգեստը, որպիսին միայն պալատում են հազնում: Մեզ յայտնուեց, որ ոչ մի կին չէր կարող մերձենալ թագուհուն առանց սրանց պէս իր անձն այլանդակելու այդ ձևի զգեստով:

Ահա մօտենում էր մեր յոյսերի իրագործման բոպէն:

Մենք կարծում էինք, որ մեր առջև կանգնած այդ կանայքը նախասենեակում այցելուները ընդունող պալատական խանութներ ու բէզումներ էին, որոնք կատարում էին իրանց պարտականութիւնը. սակայն որչափ զարմացանք մենք երբ տեսանք որ արարողապիտոն առաջնորդեց դեսպանին մի տիկնոջ մօտ, որը կանգնած էր ետեւը մի փառայեղ հայելու դարձրած, և որը մեզ ասուեց թէ Անգլիայի մեծ Բանուն էր:

Ուրիշ բան էինք մենք սպասում տեսնել, բայց երբ կանգնեցինք այդ օգոստափառ անձնաւորութեան առաջ՝ մեզ այնպիսի ակնածութեան և յարգանքի զգացում տիրեց՝ որ մենք զարմացանք: Անկարելի էր որ որևէ մի ուրիշ կին կարողանար այդ աստիճան պատկառանք ազգել մեզ: Նա աւելի մի մեծ վէզրի կերպարանք ունէր քան մի կնոջ: Նա այնպիսի հարցեր ուղղեց դեսպանին, որոնց նմանը Պարսկաստանում միմիայն գիտնականներն են կարող տալ—հարցեր՝ որոնց վրայ կը շուարէին մեր ամենահմուտ դպիրները:

«Անշուշտ, ասացինք մենք, Անգլիայի թագաւորը շատ խելօք և իմաստուն մարդ պիտի լինի որ այդպիսի մի կնոջ վրայ հսկիչներ չէ նշանակել ինչպէս մեր երկրում նշանակում են նրա աստիճանի տէր կնոջ վրայ»: Նրա բանուն իր իմաս-

2) Իշխան, արքայորդի:

տութեամբ ոչ միայն կարող էր ինքն իրան կառավարել, այլ և ամբողջ մի կայսրութիւն: Նա՛ բանուն այնպիսի հանդարտ, մեղմ բայց վսեմ վարք ունէր, որ մենք նրան տեսնելու օրից՝ նրա մասին խօսելիս՝ զարամ բանու՝ էինք կոչում նրան:

Դեսպանն իրան յանձնուած նամակը մատուցեց թագուհուն, որը ստանալով հետաքրքրուեց եմանալ թէ արդեօք Պարսկաստանի մեծ բանուն իր ձեռքով էր գրել թէ ոչ: Մենք տեսնք որ դեսպանը կարմրեց շփոթութիւնից, որովհետև, աւանդ պարսիկ տիկինը գրել չգիտէ. պարսիկ տիկինը չունի այդ կատարելութիւնը և հետևապէս, դեսպանը ի՞նչ պատասխան էր կարող տալ թագուհու հարցին: Նա վերջապէս խոստովանուեց, որ պետական մեծ մոնշին էր գրել նամակը, և երբ թագուհին նայեց թարգմանութեանը՝ ժպտաց. բայց թէ այդ ժպիտը արտայայտութիւն էր հիացմունքի թէ ուրիշ բանի՝ ներկայ եղողներին ոչ մէկը չկարողացաւ ասել մեզ:

Նա յետոյ քննական աչքով նայեց ընծաներին և իր ուշադրութիւնը դարձրեց գլխաւորապէս պարսկական իգական սեռի ամբողջ ձեռք զգեստի վրայ: Այդ զգեստի ասեղնագործած նկարները, կտորների ազնուութիւնը և դրա վրայի ոսկու և գոհարների փայլունութիւնը նրան հիացրեց: Նա շատ ցանկանում էր որ իրան բացատրութիւն տրուէր այդ զգեստի ամեն մի մասի վրայ: Սենեակում գտնուող բոլոր կանայքը հաւաքուեցին դեսպանի շուրջը, երբ վերջինս բացատրում էր դրան հազնելու ձևը:

Նրանք շատ զարմացան շապկի ձևի և կարի վրայ, և միւսնոյն ժամանակ հետաքրքրուեցին թէ ինչու դա այդքան կարճ էր: Նրանք շատ նշմարանքներ արեցին ջիւբբէների և ժակետների վրայ, բայց երբ առաջ բերուեց վարտիկը, նրանք չնայած որ ակնածում էին թագուհու ներկայութիւնից, այնուամենայնիւ այնքան զուարճացան, որ սկսեցին քահ-քահ ծիծաղել: Նրանք սկսեցին մէկ իրանց նայել, մէկ վարտիկին: Նրանց խնդութիւնը անդիմադրելի էր. նրանց խնդութեան առարկան— վարտիկը՝ որ բաժարկով ու ճամկաւոր դիպակով այնքան հաստացրուած էր՝ փայտի պէս ուղիղ կանգնել էր սենեակի մէջ տեղում, և անշուշտ զարմանալի հակապատկերն էր ներկայացնում Ֆրանկ կանանց թոյլ, ծփուն զգեստների:

Ի միջի այլոց կար և մի արաղգիր ¹⁾ որը շատ հիացմունք պատճառեց, որովհետև ասեղնագործութեան շատ մեծ աշ-

1) Մի տեսակ գլխարկ. բառական թարգմանութեամբ նշանակում է չքրտինք բռնող:

խատանք էր թափուած դրա վրայ: Բոլոր ներկայ եղողները հետաքրքրուեցին իմանալու թէ այդպիսի փոքրիկ գլխարկ ինչ հնարքով էր կարող գլխի կատարի վրայ դրուել և մնալ առանց վայր ընկնելու: սակայն երբ դրա համար գործածուող գլխածաղիքը դուրս բերուեցին՝ բանը պարզուեց: Թաղուհին հաւանեց և գնահատեց մի քանի շատ գեղեցիկ վերմակներ, ինչպէս և մի քանի քաշմիրի շալեր և Սպանանի թաւիշներ:

Դեսպանը բաւական վարկ շահեց բացատրելով մոմիայի ²⁾ (ընծաներից մէկն էլ մոմիայ էր, որ անջքան մեծ անուն ունի Պարսկաստանում) բժշկական յատկութիւնները, որից նա բերել էր մի փոքրիկ քանակութեամբ մի կիտուածանկար տուփի մէջ: Նա ասաց, որ եթէ մի մարդի, կամ ձիու կամ վառեակի սրունքը կտորուի և այդ սպեղանուց մի վիրակապի վրայ քսուի ու կապուի կտորուած տեղին՝ մի ամիս չլրացած բոլորովին կը բուժուի: Այդ նա ասաց, սակայն մեզ շրջապատողների դէմքից երևաց, որ նրանք չհաւատացին նրան:

Թագուհու ներկայութիւնը մեզ այնքան զբաղեցրել էր, և մենք այնքան տարուել էինք նրանով, որ դեռ այս ու այն կողմը չէինք նայել տեսնելու այն գեղեցկուհիներին—նրա դստերներին, որոց մասին այնքան բաներ էինք երևակայել: Մենք ոչ լուսնանման երեսներ տեսանք, ոչ «չինարի բոյ», ոչ ջէյրանի աչքեր, ոչ մետաքսափայլ և մինչև ոտները հասնող մազերի ծամբ: Բայց շուտով մենք գլուխ տուինք մի քանի պճնազարդ զգեստներով տիկիներին, որոնց տեսանք թէ չէ՝ բացականչեցինք «մաշալան, մաշալան» որպէսզի չար աչքը չհարուածէր նրանց:

Այդ տիկիները մեզ շատ բաներ հարցրին քաղցրութեամբ, և թէպէտ մենք տեսանք որ թագաւորի դստերի մասին մեր կաղմած գաղափարները (որ առաջացել էին երևակայութիւնից և աւելի այն պատմութիւններից որ մենք կարդացել էինք «Անթարում» և «Հազար ու մէկ գիշերում») չհաստատուեցին՝ այնուամենայնիւ մենք բաւարարուեցինք նրանով որ այս երկրում, քօղածածկ երեսը աւելի պակաս նշանակութիւն ունի քան մեր երկրում, և որ բանականութիւնն ու զգայութիւնը կատարում էին պահպանների և դուսնանների պաշտօնը:

Մենք անձկութեամբ հետաքրքրուեցինք իմանալու թէ արդեօք թագաւորի դստերը մասերը ամուսնացած էին թէ ոչ: սակայն զարմանալի, մեզ տուեց թէ «նրանք ամուսնացած են»:

2) Պատուական խէժ, որ ծորում է մի ժայռից Կիրմանում:

